ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՆ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տագնապալի օրերին՝ 1943 թ. նոյեմբերի 25-ին, Խորհրդային Հայաստանի կառավարության և Հայկոմկուսի Կենտկոմի միջնորդությամբ ու ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան, ստեղծվել է 1935 թ.) հիմքի վրա Հայաստանում հիմնվում է Գիտությունների ակադեմիա: Ակադեմիայի հիմնադրումը հայ գիտնականների նվաճումների ու գիտական մեծ ներուժի ճանաչման վկայություն էր: Շուտով հաստատվում է ակադեմիայի կառուցվածքը, կանոնադրությունը, նրա իսկական անդամների կազմը: Կարկառուն հայագետ, վաստակաշատ մանկավարժ, ազգային-հասարակական, գրական հայտնի գործիչ Մանուկ Աբեղյանը (1865–1944) այն 23 անձանցից մեկն էր, ովքեր դարձան Հայաստանի գիտությունների ակադեմիայի (Աբեղյանի իմաստալից հապավմամբ՝ ՀԱՅԳԻՏԱԿ-ի) հիմնադիր անդամները: Նոյեմբերի 29-ի երեկոյան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում տեղի ունեցավ Գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր ժողով: Հայաստանի ԳԱ նախագահության հանձնարարությամբ հյուրերի ողջույնների խոսքին պատասխանում է «ավագագույն» գիտնական Մ. Աբեղյանը: Նրա այդ ճառը կրճատումներով և խմբագրված տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում (30. XI. 1943):



Հայաստանի ԳԱ-ի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստում ընթերցվելիք Մ. Աբեղյանի պատրաստած ելույթի ամբողջական տեքստը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի՝ Մ. Աբեղյանի ֆոնդում (№ 85, ինքնագիր, սևագրություն): Ելույթը շարադրված է «Ամեն ինչ ռազմաճակատի համար» վերտառությամբ 36 կոպեկանոց՝ 24 թերթանոց դպրոցական միտոդանի տետրի միայն 23-ի աջ

էջերի վրա՝ դժվարընթեռնելի բազմաթիվ ուղղումներով, հավելումներով՝ գրիչով ու մատիտով:

Տեսական և գործնական ծրագրային մի շարք խնդիրներ առաջադրող ակադեմիկոս Մ. Աբեղյանի բովանդակալից խոսքն այսօր էլ չի կորցրել իր արդիական հնչեղությունը (մասնավորապես, Ն. Մառի և Լ. Օրբելու կարծիքները գիտության կազմակերպման, գիտական կադրերի, ակադեմիական հրատարակությունների լեզվի, հայագիտության զարգացման հարցերի շուրջ): Նկատենք, որ մեծանուն գիտնականի այս ելույթի բնագրին իր «Մանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը» մենագրության մեջ (Երևան, 1970, էջ 134–137) անդրադարձել է անվանի հայագետ Ս. Հարությունյանը:

Ստորև առաջին անգամ տպագրում ենք Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստում Մ. Աբեղյանի ելույթի ամբողջական բնագիրը:

<ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻ ԲՆԱԳԻՐԸ>

*Ընկերնե՛ր *,*

Երրորդ անգամն է, որ հայ ժողովուրդը Հայրենական պատերազմի պայմաններում կատարում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման տոնը: Այսօրվա տարեդարձը նման չէ նախորդ երկու տարիներին. մեր սիրտը այժմ անսահման ուրախությամբ լցվում է երեք հանգամանքով, նախ նրանով, որ Հայրենական արյունահեղ պատերազմի ընթացքն արդեն, ինչպես ամենքս գիտենք, փոխվել է ի նպաստ մեր մեծ Միության: Վաղուց արդեն հաղթական քայլերով առաջ է գնում Կարմիր բանակը, որի շարքերում մյուս սովետական ժողովուրդների հետ կողք կողքի քաջությամբ կռվում են նաև Հայաստանի որդիքը, վաղուց մեր քաջարի բանակը մեծ առաջնորդ Մարշալ Ստալինի զորավարությամբ դեպի արևմուտք է քշում ներխուժող ֆաշիստական հորդաները և ազատում մեր Միության երկիրը, և մենք խորը համոզված ենք, որ շուտով կգա վերջին մեծ ու փառավոր հաղթությունը և շինարար խաղաղությունը: Ահա թե ինչու <է> նախ մեր սիրտն այսօր լցված բերկրանքով:

Երկրորդ հանգամանքը հենց այսօրվա տոնի օրն է, Հայաստանի սովետական երկիր դառնալու տարեդարձը: Ընկերներ, ես կարծում եմ ամենքս գիտենք, ուստի չեմ հիշեցնիլ ձեզ, թե որքան շատ բարիքներ է բերել մեր հայ ժողովրդին և մեր Հայաստան երկրին այդ մեծ քաղաքական ակտը, որի արդյունք է և մեր այսօրվա ուրախության երրորդ նշանակալից իրողությունը, Երևանում գիտությունների ակադեմիա հիմնելը: Մի քառորդ դար առաջ ո՞վ կմտածեր, թե այսպիսի մեծ գիտական հիմնարկ կհաստատվի այն երկրում, որ ավերված էր, ուր կուտակվում էր սովյալ գաղթականությունը: Բայց տոկուն հայ ժողովուրդը ոչ միայն դիմացավ չարիքին,

---

** Մ. Աբեղյանը ելույթի տեքստի 1-ին էջի վերին մասում մատիտով գրել է. «Արտասանված 1943 թ. նոյեմբ<երի> 29 գիշերը պետոպերայի թատրոնում, Ակադեմիայի բացման հանդեսին»:*

շնորհիվ սովետական իշխանության փրկվեց բնաջնջումից, այլև իբրև մի հին կուլտուրապես բարձր ազգի սերունդ՝ արագ թափ տվավ իրեն և բռնեց կուլտուրական և տնտեսական զարգացման ուղին իր բազմաթիվ և բազմազան ուսումնական ու գիտական հիմնարկներով ու գործարաններով, որ կարևոր չի թվել ձեզ, որովհետև բոլորը ձեր աչքի առաջ են թե այստեղ Երևանում և թե շրջաններում: Ես այժմ մեր Գիտությունների ակադեմիայի բացման այս ցնծալի օրը ձեր ուշադրությունը մի փոքր կզբաղեցնեմ, թե ինչ նախապատրաստողական շրջան անցավ գիտական միտքն ու գործունեությունը Սովետական Հայաստանում, մինչև հասունացավ և հասավ Գիտ<ությունների> ակադեմիային:

Ընկերներ,

*Հենց որ տնտեսապես մի փոքր կազդուրվեց մեր ժողովուրդը, 1925 թ. ամառն արդեն սովետական իշխանությունը ու պարտիան հիմնեց Երևանում «Գիտության և արվեստի ինստիտուտը» երեք բաժիններով: Դրա շուրջը խմբվեցին ժամանակի կարող ուժերը մեծ միությամբ: Դա մինչև 1930 թ. գործեց գիտությունների և արվեստների մի շարք բնագավառներում թե իր գիտական հետազոտություններով, թե գիտական զեկուցումներ անելով և .... կատարելով բազմաթիվ գիտական առաջադրանքներ, որ կառավարությունը դնում էր նրա առաջ: Նա տպագրեց ամեն տարի իր գիտական տեղեկագրերը և ուրիշ գրքեր: Հանձնարարվեց կատարելու և կատարեցին շատ գիտական գործեր, որոնցից կան և այնպիսիները <, որոնք> մնում են իրենց հրատարակությանը կամ հրատարակվում են: Ինչպես մեր Ակադեմիայի ավագագույն անդամ Ստ. Մալխասյանի բացատրական մեծ բառարանը, որ անշուշտ իրեն հեղինակի ձեռներեցության ու աշխատանքի արդյունքն է, բայց կատարվում էր Գիտ<ության> և Արվ<եստի> ինստիտուտի թե գործակցությամբ ըստ տնտեսականին և թե խորհր դակցությամբ **: Ընկերներ, ես չեմ ձանձրացնիլ ձեզ թվելով, թե ուրիշ ինչ գործեր են կատարվել այդ սկզբնական գիտական հիմնարկում:*

*1929 թ. աշնանը արդեն հասունացած համարվեց այն միտքը, որ արվեստը պետք է անջատել ինստիտուտից և թողնել միայն գիտությունները: Այդ միջոցին ակադեմիկ Նիկ. Մառն այցելել էր Երևան. այդ մասին ինձ, իբրև հիշված ինստիտուտի խորհրդի նախագահի, Լուսժողկոմից հանձնարարվեց հարցնել Մառից խորհուրդ: Եվ նա հավանություն տվավ հենց այդպես վարվելուն, արվեստն առանձնացնել և ինստիտուտը վերակառուցել իբրև գիտությունների ինստիտուտ, այն մտքով, որ գիտությունների ինստիտուտը հետագայում պիտի վերածվի Գիտ<ությունների> ակադեմիայի, որովհետև պետք է ձգտել, ավելացրեց նա, որ բոլոր ռեսպուբլիկաներն ունենան իրենց Գիտ<ությունների> ակադեմիան: Այդ եղավ 1930 թ.: Արվեստն անջատվեց: Ընկերներ, չպետք է կարծել, թե արվեստի բաժինը թույլ էր գործել և դրա համար անջատվեց: Ես *** թույլ եմ տալիս հիշել այստեղ եռանդուն գործունեությունը մի անդամի, որ այժմ ևս դադարել է հավիտյան գործելուց, բայց կարծում եմ նրա անունը չի մոռացվիլ: Նա հինգ անգամ ինստիտուտի կողմից ուղարկվեց գիտական*

** *Այս նախադասությունը Մ. Աբեղյանը վերցրել է կիսաշրջանակի մեջ:*

*** *«Ես»-ից մինչև հաջորդ պարբերությունը վերցված է կիսաշրջանակի մեջ:*

էքսպեդիցիայի հայկական գյուղերը ժողովրդական երգեր ձայնագրելու և ձայնագրեց 1000-ից ավելի երգեր, որ մնացին առանց նոտագրվելու: Բացի այդ նա եվրոպական նոտաների վերածեց Կոմիտասի ժողոված 800 ժող<ովրդական> երգեր, որ հայկական ձայնեղ նիշերով մնացել էին իրեն՝ Մելիքյանի մոտ. այդ անցավ ինստիտուտի մի հանձնաժողովով, որի անդամներն էին հանգ<ուցյալ> Սպենդիարյան, հանգ<ուցյալ> Ղորղանյան, ընկերներ Տ. Ղևոնդյան, Դեմիրճյան և ինքը՝ Մելիքյան: Ինստիտուտն այդ տպագրել տվավ Մոսկվայում: Եվ նույն ինստիտուտը Մոսկվայում տպագրել տվավ մի ուրիշ 100 ժող<ովրդական> երգեր էլ, դարձյալ Մելիքյանի ավելի առաջ ձայնագրած՝ Գարդաշյանի հետ միասին: Ապա չորս մեծ նիստերի մեջ տեղի ունեցավ մի մեծ կոնֆերանս այն խնդրի շուրջ, թե ինչպես պետք է հավաքել ժող<ովրդական> երգերի եղանակներն ու բառերը, կարդացվեցին մի շարք զեկուցումներ, և եղան որոշումներ: Ընկերներ, այս միայն երաժշտության և ժող<ովրդական> երգերի գծով. և եթե ես այն հիշեցնում <եմ>, միայն նրա համար, որ չկարծվի, թե արվեստն անջատվեց, և թե այդ բաժինը գործ չէր կատարել:

Ընկերներ, ձեզ չեմ զբաղեցնիլ մանրամասնելով առանձին հաջողությունները. ես միայն կհիշեցնեմ, որ «Գիտությունների ինստիտուտի բազիսի» վրա հետո բացվեց Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, ապա Կուլտուրայի պատմության ինստիտուտը, ապա Պատմության և գրականության ինստիտուտը, հետո նաև լեզվի սեկցիա: Այս ինստիտուտները, որ հետզհետե փոխանակեցին իրար, ամեն մեկը կատարեց իր գիտական դերը իրենց հատկացված սահմանում, մինչև որ երբ բացվեց ՍՍՌՄ - Գիտ<ությունների> ակադեմիայի հայկ<ական> ֆիլիալը, և մի տարի հետո Պատմության և գրականության ինստիտուտը միացավ Հայկ<ական> ֆիլիալին:

Ընկերներ, ես կուզեի ձեր ուշադրությունը գրավել այն բանի վրա, որ սկզբում հիմնվեց մի ինստիտուտ բոլոր գիտությունների և արվեստների համար, և ինչպես ասածներից նկատեցիք հետզհետե վերակառուցված ինստիտուտների գործունեության գիտական շրջանը նեղացավ, մինչև որ ինստիտուտը դարձավ Պատմ<ության> ու գրականության համար միայն: Ինչու այսպես: Միայն այն պատճառով, որ Հայաստանում այդ շրջանում բազմանում էին ուրիշ կողմերից գիտական հիմնարկները, ինչպես Պետ<ական> համալսարան և մի շարք գիտահետազոտական հաստատություններ, որոնք ունեին իրենց հատուկ գիտական խնդիրները՝ քիմիայի, երկրաբանության և այլն: Գիտական գործունեություն սկսեց ծավալվել Հայաստանում, հատկապես Երևանում. բազմակողմանի կերպով և մի շարք մասնագիտական հիմնարկներում, մինչև հիմնվեց Արմֆանը, և սկսեց տեղի ունենալ հակառակ երևույթը, այսինքն գիտության զանազան մարզերը հավաքել միացնել մի մեծ հիմնարկի մեջ: Եվ վերջապես այսօր բանում ենք այդ մեծ գիտական հիմնարկը՝ Հայկական ՍՍՌ-ի գիտությունների ակադեմիան, որ ես կրճատ ձևով թույլ եմ տալիս ինձ անվանել Հայկական Գիտակ:

Սա մի մեծ գիտական հաղթանակ է, ընկերներ, որ մեր սովետական երկիրը ձեռք է բերել սովետ<ական> իշխանության օրով 18-ամյա նախա-



Մի էջ Մ. Աբեղյանի ելույթի բնագրից:

պատրաստական եռանդուն գործունեությամբ մի շարք գիտական հիմնարկներում, որոնց թիվը և անունները, կարծում եմ, ձեզնից շատ շատերն ինձնից լավ գիտեն: Մենք պատրաստել ենք և ունենք մեծ թվով գիտական աշխատավորներ գիտության զանազան ճյուղերում, որոնց մի փոքր մասը միայն արժանացել են այսօր «ակադեմիկոս» կոչման, բայց այն կողմում կան բազմաթիվ գիտական աշխատավորներ իրոք պատրաստված հմտորեն աշխատելու, և երիտասարդ կադրեր, որոնք անդուլ և անխոնջ ջանքով ձգտում են բարձրանալու: Եվ նրանք պիտի կազմեն մեր վաղվա Հայկական Գիտակը:

Ընկերներ, ես թույլ եմ տալիս ինձ այսօրվա ուրախ օրը կրկնելու նշանավոր գիտնական, ՍՍՌՄ-ի գիտ<ությունների> ակադեմիայի անդամ, այժմ նաև հայկական Գիտ<ությունների> ակադեմիայի անդամ Լևոն Աբգարի Օրբելու մի առաջարկը, որ նա Սասունցի Դավթի հոբելյանի ժամանակ արեց իր մի ճառի մեջ: Նա այն ժամ ասաց, որ ինքը լավ գիտի, որ Սովետական Միության մեջ կան բավական թվով հայ երիտասարդներ, որոնք պարապում են այս կամ այն գիտությամբ, ցույց են տալիս ընդունակություն ու անում են կամ արդեն արել են զգալի առաջադիմություն: Պետք է ջանալ այդպիսի երիտասարդ գիտական աշխատավորներին հավաքել ըստ կարելվույն Երևան և այստեղ Երևանում ամեն հարմարություն տալ նրանց գիտությամբ պարապելու: Արդ, ընկերներ, հիշեցնելով ձեզ ակադ<եմիկոս> Լևոն Օրբելու այդ շատ կարևոր և շատ առողջ միտքը, ես էլ իմ կողմից համարձակվում <եմ> կրկնելու նույնը և կարծում եմ, որ մեր կուսակցությունն ու կառավարությունը ջանք և միջոցներ չի խնայիլ գործադրելու այն: Դրանով մեր գիտ<ության> աշխատավորների թիվը կմեծանա, գիտակադեմիան կդառնա հայկական գիտական մտքի մի իսկական կենտրոն: Դրանով հարկավ ես չեմ ուզում ասել, թե հայ գիտնականներ չպիտի գործեն մեր մեծ Միության մյուս վայրերում: Բնավ ոչ: Հայ ժողովուրդը, ինչպես ընկեր Մոլոտովն անվանել է, մի «տաղանդավոր ժողովուրդ» է. նա այնքան շատ գիտ<ության> աշխատավոր առաջ կբերի, որ նրանց մի մասը մեր Միության ուրիշ կողմերում էլ կգործեն: Բայց այժմ, երբ մեր Ակադեմիան դեռ նոր է բացվում, մեր անհրաժեշտ խնդիրը պիտի լինի մեր նորաբաց Ակադեմիայի շուրջը համախմբել մեր բոլոր գիտական ուժերը, ապահովելով նրանց բեղմնավոր գործունեության համար հաջող պայմաններ, և այդպիսով արագ թափով կբարձրանա մեր այս գիտության տաճարը, կհռչակվի նրա գիտական անունը, և նա կդառնա իսկապես մեր ազգային պարծանքը:

Ընկերներ, այդ անհրաժեշտ է մեր ժողովրդի համար: Մենք պիտի ապրենք իբրև մի ազգ անբաժան կերպով միացած սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ իբրև մի փոքր մասն ժողովուրդների այս մեծ Սովետ<ական> Միության: Ես այդ մի մեծ անհրաժեշտություն եմ համարել վաղուց և համարում եմ այժմ մեր ժողովրդի համար: Դեռ 1907 թ. արդեն տպագրած ունեմ հոդվածներ այդ մտքով: Այն ժամանակ շատերը երազում էին անկախ և միացյալ Հայաստան, ես 1907 թ. գրավոր կերպով հայտնել եմ, որ մեր ազգային քաղաքականությունը պիտի լինի սերտ և անբաժան միացած ռուսաց մեծ պետության հետ: Առանց դրան, որ եղել է նաև մեր

*հայրերի ու մեր պապերի քաղաքականությունը, մենք չենք կարող կյանք ունենալ: Այժմ, որ ավելի փոքրացել ենք թվով, ավելի ևս սերտ պիտի միանանք ռուսական մեծ ազգի հետ ****: Միացած լինելով հանդերձ մենք պիտի ապրենք իբրև ինքնուրույն ազգ, որ ունի իր առաջ երկու .... խնդիրներ իրագործելու. առաջինը՝ մեկ ընդհանուր հայրենիքի վերաբերյալ, ընդհանուր միութենական խնդիրները, որոնց իրագործմանը պիտի մասնակցի իր բոլոր ուժերով, ինչպես այժմ մասնակցում է աշխարհում չտեսնված այսօրվա մեծ պատերազմի մեջ. երկրորդ խնդիրն է իր առանձին ազգայինը, և դա է՛ և պետք է լինի առանձնապես ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալ<իստ>ական հայկական կուլտուրան: Ես շեշտում եմ «հայկական կուլտուրան»: Դրանով է, որ մենք պիտի պարծենանք մեր Միության մեջ մտնող մյուս ժողովուրդների առաջ և այլ ազգերի առաջ: Այնպես պիտի զարգացնենք, ընկերներ, մեր կուլտուրան, որ ուրիշներն ասեն, ահա մի փոքր ազգ, Սովետ<ական> Միության մի փոքր մասը, սահմանափակ թիվ ու փոքր տերիտորիա ունեցող մի ժողովուրդ, որ սակայն մեծ է, այո մեծ է իր կուլտուրայով. մի ժողովուրդ, որի նախնիները ևս կուլտուրայով՝ արվեստներով ու գիտություններով բարձր են եղել, քան իրենց ժամանակակից շատ ժողովուրդներ, բայց դժբախտ քաղաքական պայմանները ստիպել են նրան ետ մնալ, նույնիսկ ետ գնալ, բայց միանալով սովետական ռեսպուբլիկաների հետ, քաղաքականապես ապահովվել է, ունեցել է հարմարություն կուլտուրապես արագ բարձրանալու և դառնալու իր նախնիքների արժանավոր սերունդը և արժանի ապրելու իր բեղմնավոր կուլտուրական կյանքով:*

Ահա, ընկերներ, թե ինչու ենք այժմ ուրախ մեր հայկական Գիտակի, Հայկական ՍՍՌ-ի գիտ<ությունների> ակադեմիայի համար: Դա պիտի լինի մեր պարծանքը, մեր կուլտուրական մեծ օջախը, կուլտուրան, հարկավ ընդարձակ մտքով, առած գիտություն, արվեստներ, գրականություն և այլն: Մեր կուլտուրան պիտի լինի մեր իբրև առանձին ազգ գոյության իրավունքը: Ես չեմ խոսում այն հանրածանոթ մտքի մասին, որ Գիտությունների ակադեմիան մշակելով գիտության բոլոր ճյուղերը, դրանով պիտի անպայման իր օգտակարության լուման հանգանակի, դնի մեր Միության բոլոր ժողովուրդների կուլտուրապես ու տնտեսապես զարգացման գործի մեջ ևս: Ես այն միայն պիտի շեշտեմ, մեր Ակադեմիան ավելի ևս մեծ չափերով պիտի ազդի մեր հայ ժողովրդի կուլտուրապես և տնտեսապես արագ բարձրացմանը: Գիտական ալիքները այս կեդրոնից ավելի արագ և ավելի մեծ ուժով, ավելի ընդարձակ շրջանով պիտի ներգործեն իրենց մոտակայքում: Հենց դրա համար է, որ մեր առանձին ռեսպուբլիկաները ձգտում են իրենց մեջ, իրենց ժողովրդին մոտիկ գիտական ակադեմիաներ ունենալու, որպեսզի գիտությունը հեշտությամբ թափանցի ժողովրդի բոլոր խավերի մեջ:

Ընկերներ, Ակադեմիան պիտի գործի և աշխատի մեր ժողովրդի բոլոր խավերի համար. նրա գիտական աշխատությունների հրատարակությունը

**** *Այնուհետև Մ. Աբեղյանը գրել և ջնջել է հետևյալ անավարտ նախադասությունը՝ «Մանավանդ, որ այժմ ոչ թե ցարական կառավա», ապա շարունակել. «Բայց այդ չի նշանակում, թե պիտի ասիմիլյացիայի ենթարկվենք»:*

ները միայն սակավաթիվ ընտրյալների համար չպիտի լինեն, այլ լինելով բոլորը հայերեն լեզվով, հարկավ, մեծ զարկ պիտի տան մեր հայ ժողովրդի մտավորապես զարգացմանը, քանի որ մեր ժողովրդի զանազան խավերը հնարավորություն կունենան ըստ կարելուն օգտվելու մեր Գիտակի գիտական նվաճումներից: Բայց հայերեն լեզուն, որ անպայման անհրաժեշտ է, այդ միայն բավական չէ. հարկավոր է մեր հայկական գիտական միտքը թափանցի նաև մեր Միության ուրիշ կողմերը: Ուստի հարկավոր է, որ մեր ակադեմիան իր հրատարակություններն անի անպայման միաժամանակ և հայերեն, և ռուսերեն: Չպիտի խնայել, կարծում եմ, երկլեզվյան հրատարակության համար անհրաժեշտ նյութական միջոցները: Այդպիսի հրատարակությամբ հայ Ակադեմիայի գիտական նվաճումներին հաղորդակից կդառնան մի կողմից մեր ժողովուրդը, մյուս կողմից մեր Միության գիտական աշխատավորները և ուրիշները: Ռուսերեն լեզվով անշուշտ նաև կանցնեն արտասահմանում, եթե հնարավոր չի շատ կարևոր գիտական հրատարակությունների համառոտ ամփոփումը նաև մի այլ լեզվով տալ: Դրանով և Սովետական Միության մեջ և դրսում կճանաչվեն մեր գիտական գործունեությունը և մեր ժողովուրդը:

Ընկերներ, վերջում կուզեի ձեր ուշադրությունը հրավիրել մի այլ խնդրի վրա: Հայաստանի Ակադեմիան գիտության բոլոր ճյուղերի զարգացման հետ միասին՝ առանձնապես պետք է զբաղվի հայագիտությամբ, այս գիտությունը շատ ընդարձակ մտքով առած, և պատմություն, և գրականություն, և հայ լեզու, հայ ֆոլկլոր, Հայաստանի ազգագրություն, տեղագրություն, հնախոսություն, արվեստ և այլն: Այդ առարկային սկզբից հենց մեծ զարկ պիտի տա մեր Գիտակը. մենք ամենից առաջ պետք է ճանաչենք մենք մեզ, մեր ժողովրդի ու մեր երկրի անցյալը, գիտականորեն և լայնորեն պարզենք ու վեր հանենք այն բոլոր կուլտուրական նվաճումները, որ արել են մեր նախնիքները, որ և այժմ մեր պարծանքը է և պիտի լինի: Դրանով մեր Ակադեմիան մեծ գործ կատարած կլինի և այնու, որ և մենք, նաև մեր Միության ժողովուրդները, ինչպես և դրսում ուրիշները կճանաչեն հայկական անցյալը և ըստ արժանվույն կգնահատեն այն: Այսուհետև քանի որ Հայկական Գիտ<ությունների> ակադեմիա ունենք, հայկագիտության վերաբերյալ ամեն խնդրի համար, ընկերներ, շուտով դիմելու են մեզ, մեր Ակադեմիային, և նա պիտի պատրաստ լինի ամենքին ամեն տեսակի գիտական, իսկական գիտական տեղեկություններ տալով պատասխանելու:

Ընկերներ, ես այլևս չեմ ուզում ձեզ հոգնեցնել իմ անվարժ ճառախոսությամբ: Կրկին անգամ պիտի հայտնեմ իմ, հավատացած եմ և ձեր ամենքիդ հրճվանքը, որ Հայրենական պատերազմի այս դժվար օրերին, որոնց մեծ դժվարությունը արդեն անցած է, մեր կուսակցությունն ու կառավարությունն արդեն հասունացած համարելով գիտական նախապատրաստական շրջանը, Երևանում այսօրվանից բաց են անում Հայկական Գիտ<ությունների> ակադեմիան:

Պետք է աշխատենք, ոչ թե ակադեմիայի անդամության արժանացողները, այլև Հայաստանի բոլոր գիտ<ության> աշխատողները, որ մեզանում ծաղկեն գիտությունները ի փառս և ի պարծանք մեր ժողովրդի, ապա և

ընդհանուր Սովետ<ական> Միության, որ մեր Ակադեմիան շուտով աճի մեծանա և փառավոր անուն վաստակի ուրիշ ակադեմիաների շարքում, որ եղբայրական ակադեմիաների սերտ գործակցությամբ ավելի ևս զարգացնի Հայաստանում կուլտուրան:

Ոչ մի ջանք և միջոց չպիտի խնայենք դրա համար, և խորը համոզված պիտի լինենք, որ մենք կտանենք այդ գիտական հաղթանակը և արագ կհասնենք դրան, երբ մեր քաջարի Կարմիր բանակն ամենայն անձնազոհությամբ պատերազմելով դաժան թշնամիների դեմ իր փառապանծ հաղթանակով խաղաղություն կբերի մեր անծայրածիր Միության բոլոր ժողովուրդներին, շնորհիվ մեծ առաջնորդ Մարշալ Ստալինի հմուտ զորավարության, և մենք էլ մեր բոլոր ռեսպուբլիկաների ժողովուրդների հետ միասին կաշխատենք և՛ մեր, և՛ մեծ Միության, և՛ մեր փոքր երկրի կուլտուրայի բարձրացման գործի համար:

Խորին շնորհակալություն հայտնենք մեր պարտիային և կառավարությանը Ակադեմիայի բացման համար:

*Շնորհակալություն կառավարությանը, ՍՍՌՄ ներկայացուցչին, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին******:

Կրկնենք ուրիշների հետ՝

Հավերժ փառք մեր այն հերոսներին, որ քաջի մահով ընկան իրենց Հայրենիքի ազատության համար:

Փառք ու պատիվ այն անվեհեր հերոսներին, որոնք կամ վիրավորվել են, կամ դեռ շարունակում են թշնամուն ետ քշել իրենց սիրելի երկրից դուրս և նրա դաժան ձեռից ազատել իրենց եղբայրներին:

Փառք մեր մեծ զորավար Ստալինին, որ ոգեշնչում է և ղեկավարում է հաղթական մարտիկներին:

Ողջույն Հայկ<ական> ՍՍՌ-ի գիտությունների ակադեմիային, մեր Գիտակին:

Կեցցեն Սովետական Միությունն ու Սովետական Հայաստանը, մեր մեծ Միության անբաժան անդամը:

Մ. Աբեղյան

ВЫСТУПЛЕНИЕ МАНУКА АБЕГЯНА НА ТОРЖЕСТВЕННОМ ЗАСЕДАНИИ, ПОСВЯЩЕННОМ ОСНОВАНИЮ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Выдающийся арменовед Манук Абегян (1865–1944) был одним из 23-х членов-основателей созданной 25 ноября 1943 г. Академии наук Армении. 29 нояб-

***** *Լուսանցքում մատիտով գրված ու դժվարընթեռնելի այս նախադասությունը վերականգնել ենք մոտավոր իմաստով, տեքստում տեղն էլ որոշել ելույթի բովանդակային շարադրանքից:*

ря в Государственном театре оперы и балета им. Ал. Спендиарова, на торжественном заседании, посвященном основанию Академии наук Армении, выступил и М. Абегян. Его выступление, содержащее ряд теоретических и практических программных задач, и сегодня не потеряло своего актуального значения.

MANOUK ABEGHYAN'S SPEECH AT THE CEREMONIAL MEETING DEDICATED TO THE FOUNDATION OF THE ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

Prominent Armenologist Manouk Abeghyan (1865–1944) was one of 23 members-founders who established the Academy of Sciences on November 25, 1943. On November 29, at the ceremonial meeting dedicated to the foundation of the Academy of Sciences of Armenia at the Al. Spendiarov State Theatre of Opera and Ballet, M. Abeghyan also made a speech. His speech, comprising many theoretical and practical programmed problems, hasn't lost its actual meaning today, too.